ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/8»

ք. Երևան ..24..... սեպտեմբերի 2016թ.

ՀՀ Քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը (այսուհետև՝ Հիմնարկ), ի դեմս տնօրենի պաշտոնակատար Մ. Բյուրքչյանի, որը գործում է Հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՀՀ նախագծերի պետական արտադերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Արշակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայության** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են նախագծանախահաշվային փաստաթղթերում:

2.4.5 Եթե սույն պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կատարողը սույն պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **4 200 000(Չորս միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝** ներառյալ ԱԱՀ-ն, որից 2016 թվականին իրականացվելիք շինարարական աշխատանքների մատուցվելիք տեխնիկական հսկողության ծառայության դիմաց վճարման ենթակա գումար (2016թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում) կազմում է **255 000 (երկու հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ՝** ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.2 Սույն պայմանագիրը կնքվում է ընդհանուր՝ **4 200 000(Չորս միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ** արժեքով՝ ներառյալ ԱԱՀ-ն, սակայն քանի որ նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան պայմանագրի գինն է՝ Ծառայության մնացած մասը կմատուցվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Ծառայության մատուցման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը,

սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2016 թվականի դեկտեմբերի 25-ը.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.7 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2 , N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>> ՊՀ	<<ՀՀ նախագծերի պետական
ք. Երևան, Հանրապետության Հրապարակ,	արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ
կառավարական տուն 3,	Հալաբյան 41 ա
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի	<<Արդշինբանկ>> ՓԲԸ, <<Նաիրի>> մ/6
Գործառնական վարչություն	Հ/Հ 2473700277210010
Հ/Հ 900011474328	ՀԿՀՀ 01508665
ՀԿՀՀ 02553861	
Տնօրենի պաշտոնակատար	
Ս. Քյուրջյան _____ (ստորագրություն)	Տնօրեն՝ Գ. Արշակյան _____ (ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1
24 09.2016 թ. կնքված ՔՆՔՇԻԳ-ԲՀՀՇՁԲ -16/8
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ Արագածոտնի մարզի գ.Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման

1	**Շինարարության որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման բնութագիրը**
	Աշխատանքների որակի /շինմոնտաժային աշխատանքների կատարման բոլոր փուլերում/ տեխնիկական հսկողության /այսուհետ՝ Հսկողություն/ ծառայության մատուցում՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ թիվ 44 հրամանի համաձայն:
2	**Հսկողության ենթակա աշխատանքների անվանումը**
	Հիմնակմախքի կառուցման շարունակական՝ ե/բ միաձույլ հիմնային հեծանների, սյուների, միջուկների, արտաքին պատերի, ծածկի սալերի, մետաղական ֆերմաների, միջնորմների, բացվածքների, տանիքի կառուցման աշխատանքներ, ներքին և արտաքին հարդարման, ներքին և արտաքին հաղորդակցուղիների (ջրամատակարարման, ջեռուցման, էլ.մատակարարման, կոյուղու, օդափոխություն, հակահրդեհային ազդանշանման, տեսահսկման և ձայնային համակարգեր), ինչպես նաև կաթսայատան ջերմատեխնիկական մաս, հեղուկ վառելիքի մատակարարում, ներքին և արտաքին հաղորդակցուղիներ, տարածքի բարեկարգում, գույքի սահմանափակ տեսականու ձեռքբերում:
3	**Տեխնիկական առաջադրանք**
	Հսկողության իրականացում Պատվիրատուի կողմից սահմանվող պարտավորությունների համաձայն:
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով կատարվող աշխատանքների համապատասխանության ապահովում նախագծային լուծումներին, շինարարական նորմերին ու կանոններին:
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով օգտագործվող նյութական ռեսուրսների որակը հավաստող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև օգտագործվող նյութերը, իրերը և կառուցվածքների որակը, աշխատանքների կատարման տեխնոլոգիաները ստանդարտներին, տեխնիկական և նորմատիվ փաստաթղթերի այլ պահանջներին համապատասխանության ապահովում:
	Հսկողական ստուգման միջոցով իրականացվող աշխատանքների կատարման ժամկետների համապատասխանության, ինչպես նաև թերությունների բացահայտման և վերացման ապահովում:
	Հսկողական չափագրությունների միջոցով փաստացի կատարված շինմոնտաժային աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների և հաշվարկների համապատասխանության ապահովում, հաշվետվությունների ներկայացում:
	Կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում՝ ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշման համաձայն:

Ծառայության մատուցման ժամկետը

Սկիզբը	Սկիզբը
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից

* Կատարողը ծառայությունները մատուցում է Արագածոտնի մարզ, գ. Քուչակ ,11 փ. 14 շ. հասցեում:

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>> ՊՀ	<<ՀՀ նախագծերի պետական
ք. Երևան, Հանրապետության Հրապարակ,	արտադերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ
կառավարական տուն 3,	Հալաբյան 41 ա
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի	<<Արդշինբանկ>> ՓԲԸ, <<Նաիրի>> մ/6
Գործառնական վարչություն	Հ/Հ 2473700277210010
Հ/Հ 900011474328	ՀՎՀՀ 01508665
ՀՎՀՀ 02553861	
Տնօրենի պաշտոնակատար	
Մ. Բյուրքչյան	Տնօրեն՝ Գ. Արշակյան .....
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2
24 09.2016 թ. կնքված ՔՆՔԾԻԳ-ԲԸՀՇՁԲ -16/8
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
(բաժին 08, խումբ 02, դաս 03, ծրագիր 03)

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	255 000	255 000	255 000	255 000	255 000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

Պ ա տ վ ի ր ա տ ու
ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>> ՊՀ
ք. Երևան, Հանրապետության Հրապարակ,
կառավարական տուն 3.
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
Գործառնական վարչություն
Հ/Հ 900011474328
ՀՎՀՀ 02553861

Տնօրենի պաշտոնակատար
Ա. Քյուրեղյան ..... (ստորագրություն)
Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
<<ՀՀ նախագծերի պետական
արտադերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ
Հալաբյան 41 ա
<<Արդշինբանկ>> ՓԲԸ, <<Նաիրի>> մ/ճ
Հ/Հ 2473700277210010
ՀՎՀՀ 01508665

Տնօրեն՝ Գ. Արշակյան ..... (ստորագրություն)
Կ.Տ.
"ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՍՏԱՅԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ"
01508665
Լ-05

Հավելված 3
24 09.2016 թ. կնքված ՔՆՔԾԻԳ-ԲԸՀՇՁԲ -16/8
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
24 09.2016 թ. կնքված ՔՆՔՇԻԳ-ԲԸՀՇՁԲ -16/8
ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N -------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 10
<<ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/8>> ծածկագրով
բանակցային ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N <<ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/8>>

(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան <<23>> 09 2016 թ.

«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության գործադիր տնօրեն՝ Գ. Արշակյանի (նույնականացման քարտի համարը՝ 00040186, տրված՝ 29.11.2012թ., 046-ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1.ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ Քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ԾԻԳ>> ՊՀ-ի կողմից կազմակերպված՝ **ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների** ձեռքբերման <<ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/8>> ծածկագրով բանակցային գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի ընօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՈԱ Քրեդիթ Ռեֆորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ընկերության անվանումը՝ «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ,
Ընկերության հասցեն՝ Հալաբյան 41ա,
Ընկերության բանկի անվանումը՝ «Արդշինբանկ» ՓԲԸ, «Նաիրիի» մ/ճ,
Ընկերության Հ/Հ 2473700277210010,
Ընկերության ՀՎՀՀ 01508665

Գործադիր տնօրեն՝ Գ. Արշակյան

(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ Մ. Սահակյան

(ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՐՏԱԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ 01508665 L-05

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___ թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ

4. Վճարողի բանկը՝ «Արդշինբանկ» ՓԲԸ, "Նաիրի" մ/ճ

5. Վճարողի հաշվի համարը՝ /հշ.N/ 247370027721001 0

6. Վճարողի ՀԿԱՀ՝ 01508665

7. Վճարողի ՀՎՀՀ՝

8. Շահառու՝ ՀՀ Քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ՄԻԳ>> ՊՀ

9. Շահառուի ՀԿԱՀ՝ 02553861

10. Շահառուի բանկը՝ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն

11. Շահառուի հաշվի համարը՝ հշ.N: 900005000758

12. Գումարը թվերով և բառերով՝ 420.000 (չորս հարյուր քսան հազար)

13. Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանագրի կատարման ապահովում (տուժանքի ձևով)

15. Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ <<ՔՆՔՄԻԳ-ԲՀՇՄՀԲ-16/8>>

16. Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից --- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները՝ _____ _____ 19.բ. Կ.S.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ 18.բ. Կ.S.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա _____ /ստորագրություն/ 20.բ. Կ.S. " " 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. _____ /ստորագրություն/ 21.բ. Կ.S. 22.Կատարման ամսաթիվը՝ " " ___ 20 թ.

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
/24.09.2016 թ. կնքված N ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/8 պայմանագրի /

ք. Երևան 31.03.2017թ

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ -ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Արշակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 18-ի N 1162-Ն որոշմամբ, և հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի և <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ի միջև 24.09.2016թ. կնքված՝ ծառայության մատուցման N ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/8 ծածկագրով պետական գնման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) 4.1.1 և 7.3 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին.

1.1.1 Կատարողի կողմից մատուցվող ծառայությունների գինը, 2017 թվականի համար նախատեսված ֆինանսական հատկացումների շրջանակներում, սահմանել 2 411 000 (Երկու միլիոն չորս հարյուր տասնմեկ հազար) ՀՀ դրամ, այդ թվում՝ հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

1.1.2 Հաստատել ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված N1-ի:

2.Այլ պայմաններ

2.1 Սույն ամաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2017 թվականի համար նախատեսված շինմոնտաժային աշխատանքների ավարտը:

2.2 Սույն համաձայնագիրը հանդիսանում է 24.09.2016թ. կնքված N ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/8 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Սույն համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Սույն համաձայնագրի N1 հավելվածը՝ կազմված 1 էջից, համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

1. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

Պատվիրատու	**Կատարող**
ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե, Ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն հ/հ 900011012607, ՀՎՀՀ 02565827	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ Հալաբյան 41 ա <<Արդշինբանկ>> ՓԲԸ, <<Նաիրի>> մասնաճյուղ հ/հ 2473700277210010, ՀՎՀՀ 01508665
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն
Ա. Մկրտչյան (ստորագրություն)	Գ. Արշակյան (ստորագրություն)

Հավելված թիվ 1
24.09.2016թ. կնքված N ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/8 պայմանագրի
թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
(Բաժին 08, խումբ 02, դաս 03, ծրագիր 03)

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	ՀՀ Արագածոտնի մարզի գ. Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	-	-	-	510 300	510 300	510 300	2 411 000	2 411 000	2 411 000	2 411 000	2 411 000	2 411 000	2 411 000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

Պատվիրատու
ՀՀ Կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե,
Ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012607,
ՀՎՀՀ 02565827
Աշխատակազմի ղեկավար՝

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կատարող
«ՀՀ նախագծերի պետական
արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ
Հալաբյան 41 ա
<<Արդշինբանկ>> ՓԲԸ,
<<Նաիրի>> մասնաճյուղ
Հ/Հ 2473700277210010,
ՀՎՀՀ 01508665
Տնօրեն

Գ. Սարգսյան
(ստորագրություն)